ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Անուշ Դանիելյան
Արցախի պետական համալսարանի ասպիրանտ,
Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնական

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը քրեական դատավարությունում անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության իրական երաշխիքներից է: Այս ինստիտուտը վարույթի մասնավոր անձնաց հնարավորություն է տալիս ստուգելու քրեական հետապնդում իրականացնող մարմինների գործողությունների և որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ոչ միայն կանխվում է անձի իրավունքների և ազատությունների անհիմը սահմանափակումները, այլև վերականգնվում են անձի խախտված իրավունքները:

Քրեական դատավարությունում անձի իրավունքների պաշտպանության երաշխիքները բազմազան են, սակայն այդ համակարգում դատական իշխանության տեղն առանձնահատուկ է, քանի որ դատարանները ներկայացնում են իշխանության առանձին ճյուղը և անկախ են:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտն ունի իր սահմանադրական հիմքերը, այսինքն՝ ՀՀ Սահմանադրության մեջ հռչակված են անձի հիմնարար իրավունքները, որոնց պաշտպանության համար նախատեսված է դատական պաշտպանություն: Քանի որ սահմանադրական այդ հիմնարար իրավունքների հիմնական մասը կարող է սահմանափակվել քրեական դատավարությունում, ուստի քրեադատավարական օրենսդրությունը կարգավորում է դրանց կիրառումը:

Քրեադատավարական օրենսդրությունը առանձնակի ուշադրություն է դարձրել անձի սահմանադրական իրավունքներին առնչվող քննչական գործողությունների, դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարման նկատմամբ դատական վերահսկողության նորմատիվ կարգավորմանը: Սակայն նշված ինստիտուտի շրջանակներում պատշաճ ուշադրության չի հատկացվել քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ դատական վերահսկողության հիմնահարցին: Այս հոդվածի հիմնական նպատակն է անդրադառնալ այն խնդիրներին, որոնք առաջանում են գործնականում քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումները բողոքարկելիս:

Մինչդատական վարույթում դատական վեահսկողությունն իրականացվում է հետևյալ ձևերով՝ *նախնական* (քննչական և դատավարական գործողությունների իրականացման թույլտվություն տալու ձևով) և *հետագա* (դատարանի կողմից հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի անօրինական ու չհիմնավորված գործողությունների դեմ բերված բողոքների քննարկման ձևով):

Կարելի է առանձնացնել քրեական գործի հարուցման փուլում անձի իրավունքների և օրինական շահերի ապահովմանն ուղղված դատական վերահսկո-

ղության հետևյալ երկու ուղղությունները՝ *պրոֆիլակտիկ* (հետագայում անձի իրավունքների հնարավոր խախտումների կանխարգելում) և *վերականգնողական* (արդարադատության իրականացման ընթացքում դատարանը վերականգնում է անձի արդեն իսկ խախտված իրավունքները և օրինական շահերը, ապացույցների շարքից հանում է այն փաստական տվյալները, որոնք ստացվել են օրենքի խախտմամբ և այլն)[1]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կիրառման փորձը ցույց է տվել, որ կան մի շարք հարցեր, որոնք օրենքով բավականաչափ հստակ չեն կարգավորված: Դրանց ճիշտ լուծումից է կախված մինչդատական վարույթում քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի խախտումների ժամանակին վերացումը: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հիմնահարցերը միշտ էլ եղել են դատավարագետների ուշադրության կենտրոնում[2]:

Եթե խոսենք բողոքարկման առարկայի մասին, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով ամրագրված է, որ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով: Միաժամանակ նույն հոդվածի 2-րդ մասով ամրագրված է, որ դատարան կարող են բողոքարկվել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները: Ինչպես կարող ենք նկատել, վերոնշյալ նորմում և առհասարակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որևէ հոդվածով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակում ուղղակիորեն քրեական գործ հարուցելու մասին որոշումը մատնանշված չէ, որի հիման վրա էլ ՀՀ դատական պրակտիկայում երկար տարիների ընթացքում առաջին ատյանի դատարանների ու վերաքննիչ դատարանի կողմից քրեական գործ հարուցելու մասին որոշման դեմ բերված բողոքները բազմիցս չեն բավարարվել այն հիմնավորմամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որևէ հոդվածով սահմանված չէ այդ որոշման դատական բողոքարկման հնարավորություն, բացի այդ՝ նաև այն հիմնավորմամբ, որ ՀՀ քրեական դատավարությունում քրեական գործը հարուցվում է՝ քրեական օրենսգրքով չթույլատրված ենթադրաբար կատարված հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքի (արարքների) կապակցությամբ, այլ կերպ՝ փաստի առթիվ, և որևէ անձի համար քրեական դատավարությունում այն իրավա-

---

[1] Տե՛ս **Петрухин И. Л.** Судебная власть: контроль за расследованием преступлений. – М., 2008, էջ 40.

[2] Տե՛ս **Бурмагин С.В.** Судебное рассмотрение жалоб в порядке ст. 125 УПК РФ (Комментарий к обзору практики судов Архангельской области) // Юридический мир. – 2004. – № 12. – էջեր 80-86; **Ковтун Н.Н., Ярцев Р.В.** Практика судебного контроля за решениями и действиями (бездействием) публичных процессуальных органов, ограничивающими права и законные интересы личности в уголовном процессе: Учебно-практическое пособие. – Н. Новгород, 2006; **Артамонов А.Н.** Реализация принципа обжалования в досудебном уголовно-процессуальном производстве. – Омск, 2006, էջեր 44-45; **Դիլբանդյան Ս.** Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթում, Երևան, 2011, 479 էջ: «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս (2-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով)», Հեղին. խումբ՝ Ս.Դիլբանդյան, Ա.Հարությունյան, Գ.-Ղազինյան և այլք, Երևանի համալս. հրատ., 2010, էջ 249 և այլն:

կան որևէ հետևանք չի առաջացնում, ուստի՝ քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ քրեական դատավարությունում որևէ մեկի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվում[1]: Դրանից հետո բավականին երկար ժամանակ իրավակիրառ պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դատական բողոքարկմանը վերաբերող նորմերը մեկնաբանվել են այնպես, որ բացառել են քրեական գործ հարուցելու մասին որոշման դատական բողոքարկումը:

Տեղին կլիներ ընդգծել, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության օբյեկտը անընդհատ փոփոխվում է՝ մասնավորապես ներառելով այնպիսի որոշումներ և գործողություններ, որոնք մինչ այդ դատական վերահսկողության օբյեկտ չեն հանդիսացել: Օրինակ, Ա.Ղամբարյանը դեռևս 2006 թվականին հրապարակած իր հոդվածում՝ նվիրված քրեական գործ հարուցելու որոշման դատական կարգով բողոքարկման ինստիտուտին, եզրակացրել է, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը քրեական գործ հարուցելու մասին որոշման դատական կարգով բողոքարկման որևէ դրույթ չի պարունակում, սակայն նման դրույթի բացակայությունը չի կարող մեկնաբանվել որպես այդ որոշումը բողոքարկելու արգելք, քանի որ, ըստ հեղինակի, եթե այդ որոշումը հարուցվել է կոնկրետ անձի դեմ և խախտում է մարդու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, ապա այն հետագա դատական վերահսկողության օբյեկտ է[2]:

Վերոնշյալ մոտեցումը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ամրագրված՝ անձի պաշտպանության իրավունքի ուժով ամրագրվել է Լևիկ Պողոսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ, և այսօր քրեական գործ հարուցելու մասին որոշումը ենթակա է դատական բողոքարկման, եթե այն խախտում է անձի հիմնարար իրավունքներն ու ազատությունները, օրինակ՝ այն դեպքում, երբ քրեական գործը հարուցվում է ոչ թե փաստի առթիվ, այլ կոնկրետ անձի դեմ[3], սակայն դրա հետ մեկտեղ՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից անձին որևէ դատավարական կարգավիճակ չի տրվում, որի պատճառով անձը չի կարող օգտվել դրանից բխող դատավարական երաշխիքներից:

Այսպիսով, Եվրոպական կոնվենցիայի, ՀՀ Սահմանադության և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների լույսի ներքո նախատեսվել է շահագրգիռ անձի կողմից քրեական գործ հարուցելու մասին որոշման դատական բողոքարկման հնարավորություն, եթե այն խախտել է իր սահմանադրական իրավունքներն ու ազատությունները կամ էլ սահմանափակել է արդար դատաքննության իրավունքը:

Անդրադառնալով քրեական գործի հարուցման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշման դատական բողոքարկման հաջորդ վիճահարույց խնդրին՝ հարկ է նշել, որ բացի վերոնշյալ հարցերից՝ դատավարական պրակտիկայում առաջանում է ևս մեկ կարևորագույն խնդիր: Հիմնականում հարցը վերաբերում է նրան, որ քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ նախադրյալներ դնելու ընթացքում, այսինքն՝ նյութերի նախապատրաստության փուլում, վարույթն իրականացնող մարմնի կողմից կիրառվում են հարկադրանքի միջոցներ, որոնք, ըստ էության, բացարձակապես կիրառելի չեն, քանի որ այդ փուլում վարույթն իրականացնող մարմնի գործողությունները պետք է ուղղված լինեն քրեական գործի հարուցման համար անհրաժեշտ ապացույցների հավաքելուն, ինչը ենթադրում է, որ այդ ընթացքում ապացույցների հավաքման մեթոդները սկզբունքորեն բացառում

---

[1] Տե՛ս Վալերի Գրիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ԵԿԴ/0031/11/08 որոշումը, կետ 14:

[2] Տե՛ս **Ղամբարյան Ա.,** Քրեական գործ հարուցելու մասին որոշման դատական կարգով բողոքարկումը, // «Օրինականություն», No 35, 2006թ., էջ 39:

[3] Տե՛ս Լևիկ Պողոսյանի վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0136/11/11 որոշումը:

են քրեադատավարական հարկադրանքը[1]: Ուստի եթե օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակիցները հանցագործության մասին հաղորդումն ստուգելու համար քաղաքացիներին հարկադրաբար տանում են ոստիկանության բաժին՝ նրանցից բացատրություններ վերցնելու համար, և նրանց այնտեղ պահում բավականին տևական ժամանակ, դրանով իսկ խախտելով անձնական անձեռնմխելիության նրանց սահմանադրական իրավունքը, այդպիսի գործողությունները կարող են բողոքարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով:

Քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ դատական վերահսկողության հաջորդ վիճահարույց և բազմաթիվ քննարկումների տեղիք տված հարցն այն է, որ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանվում են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ընդհանուր և հատուկ կարգեր, որոնք միմյանց լրացնելու փոխարեն գործնականում շատ հաճախ բախվում են՝ առաջադրելով միևնույն խնդրի լուծման տարբեր մեթոդներ և եղանակներ, ու միասնական կիրառություն չեն ստանում: Խոսքը նախ և առաջ վերաբերում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դատական բողոքարկման հարցին, որը կարգավորվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածներով:

Ընդ որում, հատկանշական է ընդգծել, որ վերոնշյալ երկու հոդվածներն անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից առաջացնում են խիստ տարբեր իրավական հետևանքներ: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը սահմանում է անձի խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու՝ վարույթն իրականացնող մարմնի վրա դատարանի կողմից պարտավորություն դնելու, իսկ 185-րդ հոդվածը՝ բողոքարկվող որոշումը վերացնելու կամ հաստատելու մասին:

Այդ խնդիրը լուծելու և օրենքի միատեսակ կիրառությունը ապահովելու համար հիշյալ հոդվածների հարաբերակցության հարցին 2011 թվականին անդրադարձել է Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ քննարկվող հոդվածները հարաբերակցվում են որպես համապատասխանաբար ընդհանուր և հատուկ իրավական նորմերի՝ հավելելով, որ նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում իրավակիրառողը պետք է նախապատվություն տա հատուկ նորմին և չկիրառի ընդհանուր նորմը[2]:

Վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակության որոշումների լույսի ներքո, ուսումնասիրելով նաև դատական պրակտիկան՝ կարծում ենք, որ դատական պրակտիկայում շարունակվում է տիրել այն իրավիճակը, երբ պայմանավորված կոնկրետ գործի առանձնահատկություններով՝ դատարանի առջև խնդիր է դրվում, թե որ նորմն է կիրառելի՝ նույնիսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վճռաբեկի նախադեպային որոշումներով հստակ ընդգծված են դրանց կիրառելիության սահմանները:

Համակարծիք լինելով ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած այն դիրքորոշմանը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված նորմերը վերաբերելի չեն քրեական գործ հարուցելու փուլի նկատմամբ իրականացվող հետագա դատական վերահսկողությանը՝ պայմանավորված այդ

---

[1] Տե՛ս **Коневец К. С.** Способы собирания доказательств на стадии возбуждения уголовного дела в российском уголовном процессе: Автореф. дис. ... канд. юрид. наук. – Краснодар, 2008, էջեր 10-11.

[2] Տե՛ս Համբարձում Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշման 18-րդ, 21-րդ կետերը:

փուլի առանձնահատկություններով[1], միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ հաշվի առնելով հենց այդ փուլի առանձնահատկությունները՝ այդ թվում նաև անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից՝ տեղին կլիներ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանել տվյալ հարցը կարգավորող մեկ ընդհանուր նորմ, որը կունենա մեկ միասնական դատական քննության առանձնահատկություն՝ պայմանավորված նաև բողոքի ներկայացման ժամկետներով, և կառաջացնի մեկ միասնական հետևանք: Եվ այդ դեպքում միայն Վճռաբեկ դատարանի՝ իր նախադեպային որոշումներով բազմիցս նշած՝ անձի իրավունքների և օրինական շահերի համար բարենպաստ և անբարենպաստ հետևանքները կառաջանան ըստ տվյալ փուլի առանձնահատկությունների:

Հաջորդ վիճահարույց հարցն այն է, որ իրավական պրակտիկայում շատ անգամ անորոշություն է առաջացրել այն իրավիճակը, որ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների օրինականության և հիմնավորվածության նկատմամբ դատական վերահսկողությունը իրականացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված կարգով. կիրառվել է բողոքի քննության նույն մեթոդը, որն էլ առաջացրել է մեկ միասնական հետևանք: Այս հարցի վիճահարույց լինելը պայմանավորված է անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ:

Դրա հետ կապված՝ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումները նույնացնելու անթույլատրելիության հարցին՝ արձանագրելով, որ դրանք իրավական տարբեր բնույթ, բովանդակություն, նպատակ և հետևանքներ ունեցող դատավարական որոշումներ են, ուստի քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման՝ դատական վերահսկողության նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով կառուցակարգը կիրառելի չէ[2]:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարևոր ենք համարում նշել, որ մասնավորապես դատական վերհսկողությունը քրեական գործ հարուցելու փուլում բացառապես ուղղված է անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությանը և այն հիմնական երաշխիքներից է, որը պետք է ապահովի այդ իրավունքների անխափան իրագործումը: Քրեական գործ հարուցելու փուլով է սկսվում քրեական վարույթը, դրա ընթացքից է կանխված միայն, թե անձը կդառնա արդյոք քրեադատավարական սուբյեկտ, թե ոչ, նրա նկատմամբ կառաջանան արդյոք որոշակի քրեաիրավական հետևանքներ, թե ոչ, նրա նկատմամբ կկիրառվեն արդյոք քրեադատավարական հարկադրանքի միջոցներ, թե ոչ: Խոսքը վերաբերում է այն միակ հանգամանքին, որ քրեադատավարական հարաբերություններում՝ ի տարբերություն այլ իրավահարաբերությունի, առավել քան սահմանափակվում են անձի իրավունքները և ազատությունները, ուստի անհրաժեշտ է, որ այն մեկ միասնական կարգավորում ստանա և որևէ դեպքում այլընտրանքի տեղիք չտա:

[1] Տե՛ս Ազատ Զուլհակյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԱՎԴ4/0004/11/13 որոշում:
[2] Տե՛ս Սամվել Շահնազարյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԵՇԴ/0002/11/14 որոշումը:

СУДЕБНЫЙ КОНТРОЛЬ ЗА СТАДИЕЙ ВОЗБУЖДЕНИЯ УГОЛОВНОГО ДЕЛА В КАЧЕСТВЕ ГАРАНТИИ ЗАЩИТЫ КОНСТИТУЦИОННЫХ ПРАВ И СВОБОД ЧЕЛОВЕКА

Ануш Даниелян
Аспирант Арцахского государственного университета,
помощник судьи суда общей юрисдикции Сюникского марза

В данной статье рассматривается проблема обжалования решений, которые принимаются на стадии возбуждения уголовного дела. По мнению автора, из-за особенностей этого этапа, в том числе с точки зрения защиты прав и законных интересов человека, было бы целесообразно Уголовным-процессуальным кодексом Армении определить единую норму, регулирующую данный вопрос, который будет иметь особенность единого судебного разбирательства. И в этом случае только благоприятные и неблагоприятные последствия для прав и законных интересов человека, неоднократно упоминаемого прецедентным правом Кассационного суда, будут обусловлены особенностями этого конкретного этапа.

JUDICIAL CONTROL OVER THE STAGE OF INITIATION OF CRIMINAL PROCEEDING AS A GUARANTEE OF THE PROTECTION OF A PERSON'S CONSTITUTIONAL RIGHTS AND FREEDOMS

Anush Danielyan
PhD student of Artsakh State University,
Assistant of Judge at Syunik Marz Court of Common Jurisdiction

This article discusses the problem of appealing decisions that are taken at the stage of initiation of criminal proceeding. According to the author because of the peculiarities of this stage, including in terms of protecting the rights and legal interests of a person, it would be wise of the Criminal Procedure Code of Armenia to define a single standard regulating this issue, which will have the feature of a single trial. And in this case only favorable and unfavorable consequences for the rights and legitimate interests of the person, repeatedly mentioned by the case law of the Court of Cassation, will be conditioned by the peculiarities of this particular stage.

Բանալի բառեր – *դատական վերահսկողություն, բողոքարկում, իրավունք, օրինական շահ, քրեական գործ հարուցել*
Ключевые слова: *судебный контроль; обжалование; законный интерес; возбуждение уголовного дела*
Key words: *judicial review; appeal; right; legitimate interest; initiate criminal proceeding*